ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2016 թվականի **թիվ 100** քաղ. Մոսկվա

«2015 թվականին ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեների միջեւ բաշխելու վերաբերյալ հաշվետվության մասին» Եվրասիական միջկառավարական խորհրդի կարգադրության նախագծի վերաբերյալ

Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 5 հավելված) 54-րդ կետի, «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 1 հավելված) 43-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա, ընդունելով ի գիտություն 2015 թվականին ներմուծման մաքսատուրքերի

գումարները հաշվեգրելու եւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեների միջեւ բաշխելու վերաբերյալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի տեղեկությունները՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Հավանություն տալ «2015 թվականին ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեների միջեւ բաշխելու վերաբերյալ հաշվետվության մասին» Եվրասիական միջկառավարական խորհրդի կարգադրության նախագծին (կցվում է) եւ այն ներկայացնել Եվրասիական միջկառավարական խորհրդի քննարկմանը:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Բ Սագինտաեւ**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« » -ի 20 թվականի **թիվ** քաղ.

2015 թվականին ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեների միջեւ բաշխելու վերաբերյալ հաշվետվության մասին

Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 5 հավելված) 54-րդ կետի, «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 1 հավելված) 43-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա, ընդունելով ի գիտություն 2015 թվականին ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեների միջեւ բաշխելու վերաբերյալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տեղեկությունները՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիային՝ իրականացնել «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 5-րդ հավելված) իրագործման դիտանցում:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**